

խաւաքարտներ, որոնց վրայ գրուած էին ամէն մէկ շիրմարձակի անձուանալի անունները:

Իսկ հանդէսի սկիզբը գրուեցաւ «Հ. Մ. Հ.» տեղիս ն. կեզր. վարժարանի աշակերտներէն կազմուած երգիչ խմբակի «Մեր Հայրենիք» երգովը, որմէ յետոյ Խարախանեան Սրբազանը՝ եպիսկոպոսական պերճ շորերով և խոյրը զլիսին, աթոռակի մը վրայ բարձրացաւ և խօսեցաւ բացման ճառը, որով բացատրեց հանդէսին նշանակութիւնը... և Տարոնցի մեծ նախահայրերու՝ ազգային վերածնութեան գործին մէջ ունեցած մեծ և նշանակելի դերը վեր հանելով, յորդոր կարգաց, որ ժողովարդը սիրայօժար մասնակցի Մուշի մէջ հաստատուելիք արադաշարժ մամուլի ֆօնտին, որ արդէն վաղուց ի վեր գոյութիւն ունի և փայփայանքի առարկայ է, շնորհիւ ամերիկացեան Տարօնցիներու կազմած «Տարօն-Տուրուբերան» Ուսումնասիրաց միութեան ազգասէր փանջերուն:

Ներկաները զէպի այն զնահատելի նպատակը հրահրելու գիտաւորութեամբ, բազմատուրեան զրու Տարօնը իր շրջակայ քաղաքներու հետ և ըսաւ. «Սիրելի ժողովուրդ, ամօթ կը լինի մեզի համար, եթէ զարկ չտանք մեր ազգային կրթութեան՝ ընդհանրապէս և մեր փառքը կազմող լեզուին ու զրականութեան մասնաւորապէս և բաւականանանք պարծեանալով այն փառքով միայն, որ գրեւոր գիւտի հեղինակը, կարեւոր պատմիչները ու հոս հանդիպող թարգմանիչները Տարօն աշխարհն է արտագրերը: Մէյ մը շուրջ նայեցէք, Վան, Կարին և Փոքր Հայքի զանազան հայ կեդրոնները ունեցան իրենց կեանքը պատկերացնող, արտաբերող մամուլը և դեռ բազմահայ Տարօն իր խոր թմբուրեան մէջը կը մնայ...»:

Սրբազանի ընդարձակ քարոզատենարանութիւնը թուրքերէնի կը թարգմանուէր մէկ կողմէն՝ ամփոփ կերպով, որովհետեւ քօմանտան փաշան իր ներկայութիւնովը հանդէսին շուքը կ'աւելցնէր:

Սրբազանէն յետոյ խօսուեցան և կարդացուեցան ճառեր, ինչպէս նաև արտասանուեցան հայերէն և թուրքերէն ոտանաւորներ (ձէնկէ կիտերքէն, Սիշէն, Անա լիսանը), բոլորը հայերէն և թուրքերէն երգերու ընդմիջումներով:

Հանդէսը փակուեցն վերջը, խօսեցաւ քօմանտան փաշան, որ զբուռատեց տիրող ոգեւորութիւնը և (Շարուն. կարգալ Գ. երես)

ԿՐԿՆԱԿ ՄԵԾ ՅՈՒՔԵԼԵԱՆՆԵՐՈՒ ՀԱՆԻԷՍԸ ՄՈՒՇԻ ՄԷՋ

ՄՈՒՇ, 3 Յուլիս, 913

Յունիս 29ի չարաթ օրը Աւաքելոց (կ'ըսուի նաև Թարգմանչաց եւ կամ Ղազարու) վանքին մէջ կատարուեցաւ գրերու գիւտի 1500 և տպագրութեան 400 ամեայ կրկնակ յորելեաններու հանդէսը:

Լուսաւորչի տօնի և այս հանդէսի առթիւ բաւական ստուար բազմութիւն մը հաւաքուեց էր:

Յերեկուան ժամ 7ուկէսին Ս. Սահակ—Ս. Մեսրոպի և Թարգմանչեաներու յիշատակին վանքին հնամենի և հնաոճ տաճարին մէջ հողեհանդիստ կատարելէն յետոյ, Թափօր մեծ հանգիստութեամբ յառաջացաւ զէպի թարգմանչաց զամբարանները, որոնք վանքի շրջափակէն դուրս, տաճարին ետեւը, ուղիղ գծով շարուած են քով քովի և որոնց քարեայ մեծ ու լերկ պատուանդաններուն և ասոնց վրայ ամբարձող նրբաքանդակ հսկայ խաչքարերուն տակը կը հանդիսն զարերէ ի վեր ոսկերտութիւն մեր Ս. Նախնեաց 1. Ստեփան Ասողիկի 2. Դաւիթ անյաղթ փրիստփայի. 3. Պօղոս Տարօնացիի, 4. Ղազարի, վանքին Ա. վանահայրը, Գլակի եղբայրը 5. Ներսէս Մշեցիի, 6. Մովսէս Խորենացիի, 7. Թումա վարդապետի, 8. (?). 9. Խաչիկի (?) և 10. քիչ հետո ասոնցմէ, տաճարին հիւսիսային պատին տակ՝ Տաճատ և որդին Չորտուանէլ Մամիկոնեան իշխաններու:

Բոլոր շիրիմները զարգարուած էին ընկուզենիի, ուռիներու թարմ ոստերով ու անթառամ ծաղիկներով և իւրաքանչիւրին վրայէն կախուած էին

նպատակադրեալ սիրուն գաղափարը , որու շուտ իրականացումին համար խրախոյս տուաւ և յաջողութիւն մաղթեց . շնորհակալ եղաւ հանդէսին երկու լեզուով նիւթեր պարունակելուն համար : Այս առթիւ շեշտեց թուրքերէնի՝ իբրև պետական լեզուի , անհրաժեշտութիւնը և վեր հանելով անոր ընծայած օգուաները , եզրակացուց , որ ամէն ազգի պատկանող օսմանցի իւրաքանչիւր անհատ պարտի զայն իր մայրենի լեզուի շափ սորվիլ :

Փաշան գեղեցիկ կերպով ալ պատկերացուց պետութեան մը էութիւնը և թուեց ըստ որ այն պարտականութիւնները , որ գոյութիւն պիտի ունենան այսպիսի պետութեան և հպատակ ըստ որ ազգերու ինչպէս նաև իւրաքանչիւր բազկացուցիչ տարրերու միջև : Ի վերջոյ իր այս ճառին անպաշտօն հանգամանքը յայտնելով զէպ իր աթոռը ուղղուեցաւ , որ ատեն եկեղեցիի տանիքի և պատերու վրայ և դամբարաններու շուրջը խոնուող բազմութիւնը բուռն ծափերովը և կեցցէներու ահեղ օրոտումով՝ զէպի լուսամիտ և անաչառ փաշան՝ իր ունեցած անկեղծ սէրն ու յարգանքը յայտնելու :

Գէաք է յիշեմ նաև , որ փաշան , բարի եղած էր , անպաշտօն կերպով , զինուորական մուզիքայի և 400-500 զինուորններու ներկայութեամբ հանդէսի օգևորութիւնը կրկնապատկելու և շնորհակամ ըսել , որ նուազախումբը զիշերն ալ վանքը թողուց ժողովրդի ցանկութեան և զիմումին վրայ :